

միտրոպեան այրուքենի՝ հետեւեալ տառերը կ'առաջարկէ և կը գործածէ. ա. պ. կ. տ. ե. գ. ը. թ. ժ. ի. յ. խ. ս. և այլն :

Բայց արժան է դիտել միշտ որ ամէն տառ բացարձակապէս անփոփոխ համազօր արժէք ունենայ հայ այբուքենին մէջ. Հիւրյմանի առաջարկածին մէջ թէպէտ յունական տառ մը և քանի մի շեշտաւորք գտնուին, պարզ տառերը ամփոփելու օգուտն ունի. ուստի և շատ բանասիրաց համար հաճոյանալով, գործածել սկսան. ինչպէս Բրուկմանն իւր գիրան Տարեքը համեմատական քերականութեան հնդկագիտական լեզուաց (Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen

sprachen, Սթրասպուրգ, 1886) : Համեմատական բանասիրութեան այս ընտիր, բայց դեռ եւս աւարտ չհասած գրութեան հեղինակ՝ առաջին հատորոյ յառաջորդական մէջ կը յայտարարէ՝ թէ ինչն տակաւին ոչ այնչափ հմտացեալ եւ րանական և հայ լեզուաց ուսմանց մէջ, հետեւող եւեթ է Բարթոլոմէի և Հիւրյմանի կարծեաց : Իրեն արդիւնքն է կարգաւորեալ դասաւորութիւնն նիւթոց, զոր այս երկու հմտից գրութեանքն կը հաւարէ : Բրուկմանն այս երկասիրութիւնն ուսումնասիրելով հարկաւոր ծանօթութիւնն կ'ունենանք այն ջանից նկատմամբ, որ ի շահ են հայ լեզուի բանասիրական ուսման լաւ գըլխաւորութիւն մը տալու :

Շարայարնիկ

ՀԱՅԲ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես հտ. ԾԱ յէջ 521)

ԱՐԻԱԿԱՆ Գաղութներու լեզուական մի տեսութիւնն և ընդ մերոյ բաղդասութիւնն տեսնեմք այժմ : —

Հնդկ-Արիականաց լեզուի մնացորդն Rig-Veda (Հրիգ-Վեդայ) սուրբ Գիրքն, որ սակայն բնական լեզուէ տարբեր կը խօսի, բնականն փոխուած է յրնկերային՝ յընտանական, և ուր ուրեմն ի կատարեալ բարբառ : Հնդկ-Արեաց բնական լեզուն կը կոչուի Prākṛit, իսկ կատարեալն՝ Sanskrit :

« Le mot Sanskrita, (parfait, accompli) est une opposition du terme Prakṛita (naturel), qui s'applique à la vieille langue vulgaire. Le Sanskrit était la langue sociale, la langue littéraire; le Prākṛit était la langue courante, la langue juridique, la langue populaire, qui tout d'abord ne fût pas la langue écrite » . (A. Hovelacque, Ling. p. 209) :

Պրակրիտ ռամկականն՝ թէ և ոչ կատարեալ լեզուի, սակայն չէ օրէն կարծելն՝ թէ զբական բարբառոյն հիմն չլինի : Սանսկրիտն նոյն հիմանց վրայ կեցած է՝ օրոց վրայ էր բնականն կամ անկատարն Պրակրիտ. այդ է՝ « mots remplis d'images, produits non par le hasard, mais par la réflexion » . « բնական » զգացմանց հետեւելով : — Իսկ « կատարեալն » (Սանսկրիտ) կը լինէր՝ « pittoresques (mots), constituant à eux seuls toute une poésie descriptive » ... « telle est la langue du Véda, sans contredit la première de toutes les langues poétiques, et la plus propre à peindre les tableaux de la nature » . (E. Burnouf, Essai, p. 74. 75) : —

C. Cantù ընդհանուր պատմութեան մէջ կ'ըսէ. « Սանսկրիտ լեզու քան զյունականն աւելի պարզ և աւելի կանոնաւոր է՝ քան զիտալականն և սպանիականն՝ աւելի համեմա-

տական ձայնաւորներու և բաղաձայնից զօղմամբ. բառերու ածանցման մեծ ազատութիւն ունի, մինչև 152 (?) զորք կրնայ կցկցել. հաբուտ և ճապով է պղատոնականին պէս, ոգեոր և հմայել պարսկի և գերմանի նման, կիւկերտականին պէս կորով և վեճմ» (Istor. univ. trad. p. Aroux et Leopardi, t. I. p. 371):

Արտաքին կերպարանքն է միայն սանսկրիտի զոր մենք կը դիտենք այժմ վեր 'ի վերոյ. ո՛րչափ է սորա և հայերենի նմանութիւնն. արդեօք հիմնովին իսկ Burnoufi և Cantùի բացատրութիւնքն մեզ ևս չեմք կարօղ սեպհականել. բառերու բարդութիւնք, ածանցք, կազմութիւնք, արմատականք, միթէ ճշգրիտ 'ի հայելոյ պատկերացումն չի՞ն հայերենի: Սանսկրիտն երեք տես ունի, — արական, իգական, չէզոք, — յունականի նման. հայն և ոչ մի, որպէս և ոչ Պարսկիւն, բնական դրութեամբ. ո՛րն է արմատականն. ո՛րն է բնականն: Մի՞թէ հնախոյզն Եւրոպիա՝ Հայ լեզուն Հնդկրոպական գոտոյն աւագ դասուն չը վերագրեր: Այս մեզ ծանօթ հայերենի համար է. իսկ ի՞նչ պիտի լինէր այն որով մեր Արիական հարք վարած են: Գայտ է որ մեզ ծանօթ հայ լեզուն չէ և չէ այն՝ որով Մեր Նախահարք վարէին, և ոչ իսկ սանսկրիտն է այն. թէ և համեմատաբար Սանսկրիտն ըստ ոմանց աւելի քան մեզ ծանօթ հայերենն պահած լինի մայրենի պատկերն: Նոր լեզու մը պէտք է խընդրեմք, նոր հայերէն մը, բայց հնազոյն քան մեզ ծանօթ հին հայերէնն. « բնական լեզուն (Frakrtā) պէտք է որոնեմք, այն որ ռամկականին մէջ աւելի պահուած է, քան զրական լեզուն մէջ. և վառն զի վերջինն առաջնայն վրայ պատուաւորուած է »:

Քննեմք մանրամասն, ծանօթէն հասնիմք անծանօթին. նախկին Արիականաց մնացորդ դրաբարէն՝ ծնունդ տամք Արիականաց նախնազոյն աշխարհաբարի գաղափարին, կամ լաւ ևս է ըսել՝ ծանուցեալ զրական սանսկրիտն մէջ որոնեմք անծանօթ բնական պրակրիտն որ է Բնիկ-Արեաց (արարատեան) նախկին լեզուն. նախնազոյն Հայոց ռամկականն. կամ ըստ ոմանց լեռնական աշխարհի ժողովրդոց (montagnard) քարբառն. զոր իր տեղն կը տեսնեմք:

Լսեմք Salomon Reinachի (Manuel 1880, p. 126) սանսկրիտի վրայ ըսածն. « Les mots composés, souvent d'une longueur extrême, sont très fréquents en sanscrit, où l'art de les composer tient presque lieu de toute la syntaxe ». Այս հասարակ է և մեզ. լսեմք հետեւեալն. « Un mot peut déterminer l'autre à la façon d'un adjectif ou d'un adverbe: Ainsi, *āmbu* (eau) (ամբու). *ՈՒՄՊ*, *ԸՄՊԵԼ*, (ըմպոն աղայական բառ), *ՈՒՄԲ*, *ԱՄՊ*, *ԱՄԲ* « associé à *da* (donner), (տա), *ՏԱԼ*. *ՏԱՅ*, « forme *Ambuda* (nuage) », (ամբուտայ). *ԱՄՊ*, *ԱՄԲ*: 'Իտեղի է զի Հայն աւելի արմատական ունի, ըստ որում հրատու զամ լաւ ևս ընպատակ (āmbuda) կ'ըսէ սանսկրիտն Ամպի, և ջրոց (āmbu) ամպ, ոռակ. մինչ Հայն ջրոյ Ոռակ, ըմպ (արմ.), և յրատուի՝ (āmbuda)՝ Ամբ, ամպ: « *Ambuda et nila* (bleu) donnent *nīlāmbuda* (նիլամբուտայ) (le nuage bleu, nīlāmbuda avec *çyama* (Սիամա) (azuré) donnent *Nīlāmbuda-çyama*, (Azuré comme le nuage bleu). —

Աւելորդ է կրկնելն՝ թէ քանի սովորական է նոյն իսկ ծանօթ հայ լեզուի համար այս բարդ բառից կանոն, և թէ որչափ ընտանի է մեզ յիշեալ հաստուածն Reinachի ըստ կանոնայց և ըստ բառից միանգամայն. և աւելի պարզազոյն և արմատական Հայն՝ որ նոյն արմատն մպ, մբ, վարէ ոռակ, ըմպ, (ըմպել, ըմպանակ), āmbu=ջրոց տեղ, և ամպ, ամբ, āmbuda=ամպի տեղ:

Որչափ ազգ մը քաղաքականանայ՝ այնչափ և իւր լեզուն կատարելութիւն և զարգացումն կ'ունենայ. սակայն նոյն բանն չեմք կարօղ զըրուցել և լեզուի մը արմատական մասանց համար, որք քաղաքականութեան հետ աւելի ևս կը հաստատուին և կ'արմատանան. Bréal (Lect. à l'Académie des Ins. et belles lettres) հետեւեալ հաստատով կերպով իւրից կը նպաստէ մեզ. « Les racines sanscrites ne peuvent être confondues avec les germes de la parole, qui en sont séparés par un nombre indéfini des siècles ». Այս մանաւանդ լեզուական արմատական կազմութեան հաստատութեան շնորհիւն

է, զոր « կատարեալ » լեզուն կը պարտի « բը-
նականին » : (Տես F. Baudry. Journ.
des Débats 14 juin 1878): — Նոյն
սանկրիտ āmbu բառին ունիմը ուրիշ մի
բարբոթիւնն . āmbudaçyava (le nuage
noir), āmbuda + Çyâva = Սեաւակ,
Սեաւ անկ : — Այս և այնպիսի օրինակք հեռի՞
են արդեօք մեզ ծանօթ հայկական լսելիքէ :
Նոյն կազմութիւնը, նոյն բառը, նոյն բարբոթ :

A mesure que les textes (des Védas)
sont publiés, on les applique à l'inter-
prétation des langues et des idées pri-
mitives de tous les peuples aryens. Qui
ne sait combien les antiquités persan-
es et grecques ont déjà profité de ces
études ? J. Mohl (Sept ans d'études,
t. II, p. 194): Եթէ մեր փաստաբանած
բնիկ Արիաստանն (Հայ աշխարհ) լուսաւորուի
հնախուզութեամբ՝ սրչափ աւելի պիտի օգտուին
Արիական (հնդեւրոպական) գոտույն վարաբերող
ազգերն :

Արիական սանկրիտն, « աստուածային լե-
զուն » յիսուն և կամ աւելի գրեր ունի, ձայ-
նական ամեն աստիճանի յարմար. եթէ քըն-
նեմը այժմեան հայկական գրերն իսկ, որոնց
ձեն մեծաւ մասամբ գրոց գիւտի ժամանակ
փոխուած են, կարծեմք թէ եթէ յիսունն
շանցիմք՝ գէթ վար ալ չեմք մնար : (Տես Ակ-
նարկ Հայ Աթուլթայից Պատկեր Հանդ. Մարա-
ապրիլ 1892 . Ս . վրդ . Նազարեթեան) : Ե-
թէ մի առ մի լուծեմք այլ գրերն, և զանա-
զան դիպաց մէջ այլ և այլ ձայներուն ուշ դը-
նեմք, մի և նոյն գրոյն, կարծեմ թէ վաթ-
սունի կը մօտիմք : L'alphabet sanscrit est
dit admirable ; ses cinquante lettres, di-
stribuées en un bon ordre, répondent
aux plus délicates nuances du son ;
les voyelles, assonnances sifflantes ou
nasales, les effets d'articulations di-
verses, — gutturales, palatales, céré-
brales, dentales, et labiales, — tout y
est prévu et noté. L'euphonie y est des
plus compliquée : on y a reconnu des rè-
gles sévères, déduites d'une observation
soutenue, reposant sur des principes
d'acoustique, et si délicats que nos o-

reilles blâsées ne peuvent en saisir les
nuances variées que très difficilement » :
Նոյն գրերն, նոյն փափկութիւն, նոյն քաղ-
ցրածայնութիւնն ունէր և մեր բնիկ արիական
լեզուն, և ունի այսօր իսկ . զայս շատ և շատ
անգամ լսած եմ քաջանմուտ և արեւելադէտ
եւրոպացի բարեկամներէս . յորոց միոյն խօսքն
գեռ ևս ախնջիտ մէջ կը հնչէ . « La lan-
gue arménienne, (on suppose, récitée
comme il faut), est douce comme un
gazouillement d'oiseau. յոր կրնամք յա-
ւելուլ արիական լեզուի համար M. Fonta-
neի բառն . « et si belle et si riche, à la
fois souple et forte, capable de tout
peindre et de tout expliquer, se prêtant
à tous les besoins et à tous les caprices
de la pensée » .

Հայ լեզուն յունականի և լատինի պէս
շեշտ չունի կ'ըսեմք . և սակայն բառ մը չու-
նիմք որ առանց շեշտի անցնի . թէ և վերջաւ-
յանք՝ սակայն ընթերցման ճշգրիտ կանոնաւ
քան գոյնն և լատին քաղցր կը հնչի . ձայնի
ներգլանակութիւն, նորանոր բառեր կազմելու
դիրութիւն, արմատական ճշտութիւն, և այլն,
կը փայլին մեր լեզուին մէջ . Մեր ծանօթ
հայերէնն սանկրիտի հետ բազդատելով՝ տա-
ռադարձութեան կանոնն՝ որ չբմբղանաց գիւտն
է, կը հաստատեմք : Մեր այժմեան սխալ
հնչումներն կը հաստատեմք, գրերէն ոմանց
ձայնն՝ և զուցէ մի քանի դիր ալ (գրոց գիւտի
ժամանակ) իբր աւելորդ կամ անորոշ՝ կորուսած
և չփոթած եմք բռնելով՝ կը մաւերացունեմք,
ձայնաւոր գրոց ոմանց երկձայն բլլալն կը հե-
տեցունեմք, և կը պնդեմք՝ թէ « բնական »
լեզուին մէջ՝ և կամ « գրական » բարբառոյ
սկիզբն առած ժամանակ՝ ձայնաւոր գրերն սա-
կաւաւորք էին յոյժ, թէ և հնչումն կատարեալ էր .
փափկաձայն սանկրիտն ներգլանակ լեզու
մ'է, հոսկու և եռանդուն և դիւրաթեք և
պայծառ . առ այս Surabâni և Devanâgari
կոչուած է :

Surabâni (langage des dieux) յորում
սուրբ արմատն՝ կամ լաւ ևս Սուրա ==
« Աստուած », Սար == « Պետ », « Գլուխ » .
և bani == « բան », իբր՝ Սրբոյ Աստուծոյ
Տեառն բան, Սրբաբան, կը նշմարեմ ես :

իսկ երկրորդն՝ յատկացեալ բացայայտիչն Սանսրիտ լեզուի Devanāgarī (Ecriture divine) հայկական ծանօթ Դիանագարին է : ինչպէս և Deva (Դեւա) = Դեւ, Աստուած (Dieu). = Devana (Դեւանա) = Դիւան, Աստուածային, (Divine, divina) Gari (Գարի) = Գիր, Ecriture lettres):

Աստի նոր գաղափար մի և օգուտ մ'ալ մեզի, դիտել հայերէն զե և դիւան բառերն ո՛րքան փոփոխութիւն կրած են նոյն և նման հնչմամբ և իմաստով : Ուրիշ պիտողութիւն մ'ալ, Դիւան բառն ըստ բնիկ զորածութեանն յոգնակին է Դե բառի. եւս և ան ռամկական (նախնազոյն) յոգնական վերջաւորութեամբ, որով Դիւան = Դեք, Աստուածք, և Դիւանագարի = Աստուածոց գիր կը նշանակէ, ըստ Սուրբարանի՝ որ է Աստուածոց բան :

Բնական և ուղիղ հետեւութիւն մ'է քանի որ Արարատեան տան զաւակ և սերունդ է Հնդկիկ-Արիական և Իրանեան-Արին, և քանի որ լեզուի մը ծագումը ընտանեաց կազմութեանն առաջ է, Հնդկի Իրան-Արիք՝ զաղթած են այդ հասարակաց լեզուաւ՝ որով ծնած և սնած էին բնական յարկին մէջ : Այդ գաղութը « Բնական լեզուն » (prakṛta) լսած էին ծնողաց շրթնաքէն, և նոյն ձայններով տարբերալ կը զաղթէին : Այդ բնական լեզուն նորանոր ձևեր և կերպարաններ կ'առնէր, և օրինաց կը հպատակէր : Փոփոխութիւն և մեծ յեղաշրջում անպատճառ պէտք էին կրել թէ՛ ծնողն և թէ՛ սերունդն, թէ՛ զաղութն և թէ՛ բնավայրն, արտաքին և ներքին ազդեցութեանց աստի՛ ճանալ :

Դիտելի է որ 'ի Հայոց զաղթող Քաղդէք՝ Ատրեստանի մէջ ազգաւ և լեզուաւ « Montagnard » կը կոչեն կամ կը կոչուին . « Աքաղ » որ է լեռնական : Իրանաստանի մէջ նոյնպէս « Montagnard », որ է լեռնական, « Քարա » յորմըմամբ : Հնդկիկ-Արիական՝ իբր լեռնական՝ ըստ այլ տեսութեան, կը կոչեն պուրակային կամ բնական (prakṛta). Իսկ Տիւրսեսեանք նման ձայնիւ և այլ իմաստիւ « բարբարոց լեզուաւ » կը նշանուին :

Բնիկ Արիականաց նախկին « բնական » բարբառն (նախալեզուն) շատ զիտնոց ժամանակն զրուած է ցարդ, և շատերու ալ կեանքն

զրուած : Ահաւորակ Էրոպեան լեզուաքնինք այս եզրակացութեան յանգած են ցարդ, թէ « Հնդկերոպական գօտւոյն բարբառք՝ մայր լեզուի սոյն « Ծնունդը են, և այս մայրն մեռեալ » է . որն մօր աւագ և անդրանիկ ծննդոց մին » է նաև հայ լեզուն », (ծանօթ հայերէնն) : — Ամենայն երկիւղած զգուշութեամբ կը ծնենք պուրանիս այս ճշմարտութեան, և համախոհ եմք. սակայն չեմք կրնար ճշմարտութեան մը հետեւել ուզելով՝ ուրիշ ճշմարտութիւն մ'ալ առ տուն դնել, որ է՝ « Հնդկերոպական գօտւոյն՝ այսինքն Արիական ցեղին բարբառք՝ Արեաց Մօր լեզուի ծնունդը են, և այդ մայրն իւր ծննդոց մէջ կ'ապրի : Սոյն Մօր բնակարանն Արարատ գաւառն է, և այս կեղծութիւն ճառագայթած են Արիք հնդկուր . պական գօտւոյն մէջ, և անդուտ մերթ ետ » զարձեալ այլաեւ ազգաց մէջ. սոյն մօր բարբառն Արարատեան (արիական) նախալեզուն է, կամ որ նոյն է լեռնական (աքաղեան, Գալթեան) քարառն, արմատ և մայր սանակիրտին, զերջականին, հայկականին, և այլ հնդկերոպական լեզուաց » :

Թէպէտ և ո՛րն 'ի սոցանէ աւելի ենթակալ եղած է փոփոխմանց և յեղաշրջութեանց չեմք երկարեր. միայն զի Հայ լեզուն՝ որ իբր ժամանակ՝ իւր Մօր բնակարանն և անունն և պականին կեանքանի պահել սահմանուած էր, շատ փոփոխութեանց ենթարկուած է : Սոյն մեր այս կարծեաց ցուցումն է՝ ողբացեալ ազգակցիս և բազմագէտ մտերմիս Տէրյիշեան Սեբորթէ վարդ. « Հնդկերոպական նախալեզուն » . յորում ընդերկար վաստակելով և պէսպէս ծփանաց մէջ թէ և երբեմն տատանուտ՝ սակայն միշտ աննկուն՝ կը պարզէ լեզուաբանական քննութեան կանոնքն և օրէնքն, և արիական ցեղի բազմախօս բարբառները 'ի մի հաւարելով կը քննէ, կը զննէ, կը մօղէ և կ'օրոնէ . և նախալեզուին դիմագիծն՝ և կամ լաւ ևս է ըսել՝ նմանութեան պատկերն կ'արտայայտէ, այսու առոխճանաց զանազանութիւնն : Իւր նպատակակէտն լինելով այն՝ ինչ որ է մերն, այսու և եթէ կը հեռանայ մեր զաղափարէն, զի մայր լեզուի տարբեաց մէջ սանալիրտ լեզուն իւր ծնողին աւելի նմանող կը զաւանի. պատճառն՝ վասն զի 'ի հին ժամանակն

նակաց մատենագրութեամբ ապահովուած է, կ'ըսէ, այդ բարբառ զոր դիրքին չէ ուրանալ։

Սակայն հնար է արեօք ե գիրազա՞յն մերժելն և մտահացունել՝ թէ հայ լեզուն (այդ անծանօթ ռամկականն) քան մեզ հասած ծանօթ զբարբառն աւելի մեծ նմանութիւն՝ և գուցէ թէ նոյնութիւն չունենայ Արիական բընայխարհին (Արարատեան աշխարհի) մայր լեզուին, և յետոյ ևս զանազան մատենագրութեամբք խնամուած և ապահովուած չըլլայ։

Եթէ միայն յայտնի մատենագրութիւն մը միայն ընդ միայնոյ կարող է լեզու մի փրկել, չեմ կարծել։ Ընկերային բարբառն, ընտանի յարկն, նոյն բանն կարող է ընել, գէթ մասամբ։ Ինչպէս եղած էր ցարդ ի մեզ։ Եւ ո՞վ կարէ խմբել թէ հայ նախկին լեզուն իր աւելի պարզ և արմատական զրից մէջ չէ ունեցած իւր մատենագրութիւնն։ Հնախօսն և հնախոյզն ո՞րչափ ինչ ցարդ յոգնած և կամ զբաղած են հայ լեզուի համար և հայ աշխարհի։ — յայտնի է այս։ Ո՛ւր են « իւրաքանչիւր տանց » առանձնականութեանց պատմութիւնքն », զոր Խորենացին կը յիշէ. ո՛ւր են « Գողթան » Մուսայից » հատորքն, ո՛ւր են արձանագրութիւնք, ո՛ւր քանդակք։ Դեռ ևս ցայսօր « տոսպական » արձանագիր մը (vannique) չկարաց պարզել և իմանալ Եւրոպիա ողջոյն։ « Հնդկերոպական նախակեզուի » որբացեալ հեղինակն որ մանր մուշոր պրպտելով շատ մի լուսաւոր զալափառներ յառաջ բերած է իւր յիշեալ գրութեան և « Լեզու » ամսագրութիւն մէջ՝ կը համաձայնի մեզ քիչ Հենի դազափառան փակելով իւր վերոյիշեալ գրութիւնն, այսպէս։ « Ամենայն ինչ նպաստաւոր է ընդունելու թէ այն ցեղերն որ պատմական կըղ- » զիացմամբ ապրելով նախնական եղանակն » ամենեւն քիչ օտարացած են, այսինքն հիւ- » սիտայիններն, ցեղային մարմնաւոր նշան- » ներն ալ հաւատարմութեամբ պահած են » . . . « Եթէ հիւսիսաբնակ հնդկերոպացին զատու- » ցեալ կեանք մը վարելով նախացեղին նմա- » նագոյն կեանք մը կրնայ պահած ըլլալ, ո՞վ » պիտի կարենայ արդելուլ զմեզ հնդկերոպ- » խօս նախամօր նախատիպ պէմքը նշմարելու » հանուրց հիւսիսականաց վեհագոյն » դարեր » (ծանօթ հայկական) կերպարանաց վրայ »։

Թէ ո՞վ է « Հանուրց հիւսիսականաց վեհագոյն », ոչ որ անգիտանայ։

Սանկերիւ և զանդիկ արմատականաց մէջ պէտք կը համարիմ յիշել Pâ (պահ nourrir, protéger, պահ (պահել) արմատն, ուստի ծընունդ ունի Pâtri = հայրն։ Pâtri բարդ և կրկին արմատներէ է. բոս որում Pâ = Պահ արմատականէն կը համարին ընդհանրապէս և tar = օղ մասնկէ, և կը մեկնեն Pâ-tar = Պահ-օղ։ Ըստ իս մեծ անճշգոյթիւն մ'է այս, և այլ ծագումն պէտք է ունենայ։ Հայր իմաստին աւելի մերձաւոր և ընտանի է Այրճ քան Պահն, և ինչո՞ւ Հայրն Պահօղ է և ոչ Մայրն. մանաւանդ նախին դարուց մէջ, ուր չկար պաշտամանց որոշումն - այր և կին հաւասարապէս Պահօղք էին իրերաց և ծննդոց։ « Հայր » բառի մէջ եւս բացարձակ դիտել կուտամ Այր բառն. նոյն բանն կը տեսնուի և այլ հնդկերոպական ազգաց पात-HP, pat-ER, , प, բառերու մէջ, յորում ԱՅՐն բացայայտ է. अHP. Այր, प, այլն։ — Մանրակրկիտ բազմաթիւ և լեզուաբանական ուսումնասիրութիւնն կրնայ պարզել թերեւս այս կարեւոր խնդիրն. որոց ցայսօր ծանուցեալ մեկնութիւնք և հիմունք դեռ ևս ըստ բաւականին ամրացեալ չեն։

Լեզուական մասի հետ խառնեմք և ընտանեկան երեղոյն ի չնդիկա զաղթող Արեաց, ընդհանուր Արիական ընտանեաց վրայ գաղափար մը կազմելու համար։ — Արիական (Արարատեան) ընտանիքն՝ « Առն » և « կնոջ » միութեամբն է, որք հն « հարսն » և « փեսայ », և ապա « հայր » և « մայր » . որոց զաւակներն « ուստր » և « գուստր », « եզբարք » են և « քորք »։

Այր համասեռ է Արու և Արի բառերու։ Արի (Ar = ար, առ) կը նշանակէ՝ եղայ, յառնել, արի, քաջ, ազնիւ. նոյն իմաստ կուտան Այր և Արու բառերն։ Ar = Առ, Ար, կրկնադիր, կրկնակերպ, հայերէն արմատ է բնիկ арна յառնել, արի, բային՝ համայնականէն ունիմք արի բառն։ Դիտելի է « Արի », « Արու », « Այր », բառերն, որոց արմատն vir, vi, vira, սանկրիտն չէ, որ ցանկալ կը նշանակէ, ինչպէս յիշած է « Հնդկերոպական Նախակեզուին » պատուական հեղինակն. այլ vir, vi, vira, ծագումն ունին ար, առ, ար,

արմատականէն : — « Կինն իբր մայր ծննդա-
կան ցա արմատէն ծագումն ունի, որ է Ժի,
Ժիւն . իսկ « էգ » բառն որոյ արմատականն ոչ
մի տեղ կրցի գտնել՝ բնարմատ կը կարծեմ
ցա ի, ուղիղ բնթերցմամբ ագ կամ էգ. իդա-
կան, մայր ծին և կին արմատներու, և Արարա-
տեան նախաբարբառ արիական նախալեզուի :
« Հարսն » Ar = յաշնեմ, աշնուլ,
աշրհնել, հերկել և այլն արմատականէն ունի
ըստ իս իւր ծագումն :

« Փեսայ » բառն է որ կը թուի ինձ Pâ
(Պահ) արմատէն ծագումն ունենալ իբրև պա-
հապան : — Աստի է Πόσις, potis, փեսայ : —
Ասր ընտանեկան յարկին, տեսնեմք նորընծայ
կրօնական լեզուն . M. Fontane (Inde-vé-
dique p. 63). « Devant l'autel officiant,
parlant aux dieux, prêtre en un mot,
le père de famille, l'époux a nom *deva*,
de *dîv* (briller), les reflets de l'éclatant
bûcher revêtant le prêtre de lumière.
L'épouse qui assiste au sacrifice, à
côté de l'époux a nom *dêvi* ». — Տի-
նախաբարբառ իբր փայլ և լոյս . այս բառ ար-
մատական է : իսկ « Գին » որոց նշանակու-
թեան և կիրառութեան ծագումն նոյն է, սեպ-
հականած է նոյն իսկ իմանալի կամ տեսանելի
լուսատուի : Առաջին իմաստէն է divāsa որ
է օր :

Սանսկրիտի Հնդերուպական լեզուաց հետ
իբր քոյր լեզու սնեցած յարաբերութիւնքն
մի առ մի քննելն յայտնի է որ մեր այս նպա-
տակէն դուրս է :

Արեւական և լեզուային ընտանութենէ
դուրս Հնդիկ—Արիականք իրենց կրօնական գա-
ղափարներովն ալ Բնիկ—Արիական ժողովրդեան
(Հայ Ազգի) ազգակից են և եղբայր, և մա-
նաւանդ թէ պատկերացումն և ցոլացմունք հա-
սարակաց Մօր և կեդրոնին և հայրենի յարկին
աւանդութեանց : Համառօտիւ քննեմք ինչ որ
յառաջիկային մտալիի եմք ընդարձակել :

Առ հասարակ Արիական Ազգին նախկին
կրօնական սկզբունքն էր Տէր մը ճանշնալ քան
զինքեանս բարձրագոյն, և որոյ ո՛ր և է իմաս-
տիւ պէտք ունէին ինքեանք . այս տիրոջ A-

spāti (Ասպուտի) անուն կուտային Հնդա-
րիականք : Ուստի՝ քաղած էին այդ բառն և
այդ գաղափարն Հնդարիքն . նոր զիտ մը չէր .
վասն զի նախկին բնիկ վայրն ալ անշուշտ ու-
նէին այդ գաղափարն, Արարատեան Մայրն
ալ ունէր զայդ, և նոյն բառն պահած են իւր
ժառանգորդք, « Աստուած », ձայնիւ և նշա-
նակութեամբ նոյն և նման :

Vivien de St. Martin (Géo. et pop.
p. 64) կ'ըսէ, թէ Էօթն գետոց տարեկան
յորդովթեանց յառաջ բերած բարիքէն Հնդիկ-
Արիական ժողովուրդն զԷօթն գետս աստուա-
ծացուց, և կոչեց զայն Sa—Asvati (rivière
divinisée) (Ծոր կամ ջուր աստուած), և սմա
ամուսին կարգեցին Sar—Asvan (Epoux-
divin) (Աստուածապետ, սար) : Դարձեալ երբ
Հնդկական արևու. սոսկալի ջերմութենէն հա-
րուածեալ՝ նորագոյթ Արիականն կ'ըսէին Ար-
շալոյսն և վերջալոյսն նախընտրել՝ « Aswins »
կը կոչէ . « O Aswins, vous avez enlevé
à Tchyavâna sa vieille forme, comme
on enlève une cuirasse. Vous l'avez
rendu jeune, et l'avez fait digne de
l'amour de son épouse. (Rig—Véda, s.
IV. l. IV. h. XII, v. 5) : Ո՛ր Աստուածոց
բարեբանութիւնք կը լինին, զի զՋիւսվան (?)
Tchyavâna (Ազնվան = Արև) նորակեր-
տելով՝ հարսին (որ է ջրոյ և հողոյ) սիրելի ըն-
ծայեցին : — Վասն զի Արին տօթէն և երաշ-
տէն նեղուելով հովանի և բեղմնաւորի ջուր
(անձրև) կ'ուզէ . Ահն (Ahi) զիշերակերպ ու-
րուական մը, Ազնվանի (Tchyavâna) ներ-
կայ չեղած ժամանակ (Արեգական = Ինդրայի),
զամայ կը գողանայ և անձրևն կ'արգելու . ուս-
տի Ինդրա (Արեգակն) մարտ կը հաւակէ Ահի
դէմ և կը վանէ զայն . և վասն զի անձրևէ
յետոյ զով է օդն, և մեղմ Արեգակն, և ար-
շալուսի և վերջալուոյ ժամանակ ակոթծելի է
և ամօր ջերմն և զուարթարար, ուստի Ահա-
լանն կը կոչի Աշլաւ (Tchyavân) և նորա-
կերտ սիրելի : — Այս պատմութիւն հայկա-
կան և Արարատեան ժանրակշիռ խնդիր մ'է .
զոր Աստուածութեանց և Դից նկարագիրն մէջ
պիտի պարզեմք :

Շարայարեկի